

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմ 10 րուր, կէս տարեկան 6 րուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն անկախագրատան մէջ:

Օտարապաշտպանը պիտի չի ուղարկի
Դպրատանը. Բաժնիքային ընկերություն

Խմորագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է, ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար. զմարտի 1-ին
կարգանքով ընդունվում է 2 կոպէկով:

Մ Ե Մ Ե

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱԿԵԼ

Կ Է Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881
թվի, մինչեւ յունիսի 1-ը 1882 թվի:

Բաժնետիրութեան գինը 6 րուր է:
Գրվելու համար պէտք է ուղղակի գիմել
խմորագրութեանը հետեւեալ հասցեով. Դպրատանը,
Բաժնիքային ընկերություն

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Այսինքն յայտնութեամբ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,
Նամակ Ախալցխայից. Նամակ Ս. Պետերբուրգից:
Նամակ Խմորագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Голосъ» լրագրի թղթակցութեան:
Պարտաւարական. Արտաքին լուրեր. ՅԱՅՏԱՐԻ
ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ. ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ. Մի կարեւոր
բացատրութիւն:

ԱՅԺՄ ԻՆՉ Է ՅԱՅՏԱՐԻ

Քամոյեանց եկեղեցու գործը բարձրաց-
րել է վարագործի մի ծայր որ ծածկված
էր Մակար եպիսկոպոսի գործունէութեան
վրա նրա այստեղ առաջնորդ եղած ժամա-
նակ, այն վարագործը որ այդքան խնամքով
աշխատում էին ծածկած պահէլ նրա կու-
սակցները, որպէս զի նրա առաջնորդ եղած
ժամանակ աւելի միջոց տան նրան օգտվե-
լու ազգի փողերից և գուցէ իրանք շահվեն,
իսկ նրա այստեղից գնալուց յետոյ պահ-
պանեն նրա հեղինակութիւնը ամբողջ մէջ
որպէս զի ժամանակով ով գիտէ, միջոց
տան նրան և իրանց աւելի բարձր տեղի և
աւելի լայն ասպարէզի վրա նոյնն անելու:

Շարքուրդի գործը Մակար եպիսկոպոսի
առած անխառնութիւններէն ամենաաւելի
ընկնողն է, որովհետեւ տունը և գետինը

գտնվում է քաղաքի կենտրոնում: Բայց ո՞վ
գիտէ թէ որքան այդ տեսակ գործեր կա-
տարեց նոյն Մակարը, որոնք դեռ ևս մը-
նում են անյայտութեան մէջ և հետզհետեւ
կը յայտնվեն:

Մի եկեղեցական գետին քաղաքի կենտ-
րոնի ամենագեղեցիկ տեղում, Փոխարքայի
պալատի առջև, Գօրգոյի փողոցի անկիւ-
նում, մի գետին, որի իւրաքանչիւր քառա-
կուսի սաժէնը արժէ ամենաքիչը 300 րուր
և որ պարունակում է իր մէջ 200 սաժէն,
արվում է Շարքուրդին ասան և երկու տա-
րի ժամանակով, որ սա աներ կուռցանի
այդ գետին վրա, տարեկան երեք, չորս
հազար րուր եկամուտ ստանայ, իսկ եկե-
ղեցուն վճարի տարեկան 100 րուր միայն:
Մի և նոյն ժամանակ, տան և երկու տա-
րի անցնելուց յետոյ Շարքուրդին պայմանա-
գրի գործութեամբ թող է արվում նորից
նոյն պայմաններով պայման կապել եկեղե-
ցու հետ, դարձեալ 12 տարով, իսկ այդ
ժամանակամիջոցի անցնելուց յետոյ, դար-
ձեալ թող է արվում նրան վերանորոգել
պայմանագրով դարձեալ 12 տարով: Շարքու-
րդի իրաւունք է ստանում գրաւ գնել, ծա-
խել իր շինած տները կամ եկեղեցու կամ
այլ անձանց վրա: Այդ բաւական չէ. իրա-
ւունքը մնում է և Շարքուրդի ժառանգնե-
լին:

Այսինքն իրան հաջգ է դրվում, ի՞նչ
շարժառիթներ կարող էին ստիպել Մա-
կարին այդ տեսակ պայման կապելու: Եկե-
ղեցու օգուտն մասին խօսելը այդտեղ ծի-
ծաղկի կը լինէր, քանի որ եկեղեցին տա-
րիների ընթացքում պէտք է ստանար տա-
րեկան 100 րուր միայն: Մնում են միմիայն
երկու եղանակներ իրենց, կամ Մակար ե-
պիսկոպոսը շատ էր հոգում Շարքուրդի և
նրա ընտանիքի մասին և կամեւում էր նը-

րան բարեբարութիւն անել եկեղեցական
քաղաքի, որ հազիւ թէ ընդունելի է, կամ
ինքն շահ ունէր այդ անձանց պայմանից,
հոգալով տեղի անձնական օգուտներին մա-
սին, քան թէ եկեղեցու շահերի մասին:

Նշանաւոր է որ նոյն անձինք, որոնք
միշտ անխնայ յարձակվում էին մեզ վրա,
կըր մենք Մակարի օրով քննադատում էինք
նրա գործունէութիւնը, նոյն անձինք որոնք
Մակարին Թիֆլիսից ճանապարհ գցելու ժա-
մանակ անկարգաբար օվաքներէն արեցին
նրան, բացարձակ յայտնելով նրան որ յոյս
ունեն մի օր անենել նրան կաթողիկոսական
աթոռի վրա, որոնք գումարներ հաւաքեցին
և նրա անունով Գայանեան օրհորդաց զբա-
րոցում ստիպեցին հաստատեցին, նոյն
մարդիկ յուլիսի 29-ին առաջնորդարանում
կայացած ժողովի մէջ ապշած մնացին: Նը-
րանց առջև բացվեց տարիներով ծածկված
մնացած վարագործը և նրանք տեսան
թէ ի՞նչ անդունդի առջև էին կանգնած:
Իսկ նրանք, որոնք Մակարին պաշտպանում
էին, որովհետեւ նրա շահվելուց իրանք էլ
շահվում էին, բոլորովին չեկան ժողով:

Քամոյեանց եկեղեցու գործը անշուշտ
շատ ուրիշ գործեր մեզ կը բաց անի, մի
և նոյն ժամանակ հասարակութեան աչքե-
րը կը բաց անի այն մարդկանց գործունե-
ութեան վրա, որոնք Մակարի ջիւղէ հը-
ղուեալ կուսակցներ լինելով, պղտոր ջրում
ձուկ էին որսում, և որոնք, մարդ չը գիտէ
թէ որտեղից, ամենքն էլ քիչ թէ շատ կա-
րողութեան տէր դարձան:

Բացի կոմիսիայից, որ կազմվեցաւ Շարքու-
րդի գործը քննելու համար, մենք առա-
ջարկում ենք որ կազմվի հասարակութեան
միջոց մի այլ կոմիսիա Մակար եպիսկոպոսի
առաջնորդութեան ժամանակ կատարված
բոլոր ազգային և եկեղեցական գործերը

քննելու, ընկալի անելու համար: Մենք
այդ կառավարներ և կը պահանջենք երբ
այժմեան կոմիսիան կը ներկայացնէ իր գե-
ղացումը, եթէ մինչև այն ժամանակ Մամբ-
րէն նորից չը ժողովի հասարակութիւնը և
չը կատարի մեր պահանջը յատկապէս այդ
տեսակ յանձնաժողով ընտրել տալու վերա-
բերութեամբ:

Մի և նոյն ժամանակ ամենքը գիտեն, որ
Շարքուրդի կառուցած մի յարկանի շինու-
թիւնը, որից նա 4000 րուր տարեկան ե-
կամուտ է ստանում, միայն այն պատճառով
որ գետինը, որի վրա նա կառուցված է ան-
շին գետին է, ինքն այն աստիճան թեթեւ
անհիմն, խախուռ և քիչ արժեքով շինու-
թիւն է, որ եկեղեցին շատ հեշտութեամբ
կարող էր իր սեփական փողով կառուցանել
նրան, և եթէ միջոց էլ չունէր, կարող էր
վերջապէս փոխարինաբար մի անշուն գու-
մար վեր ստնել այդ գործի համար, փո-
խանակ, ամբողջ օգուտը մի մասնաւոր մար-
դուն թողնելու և տարեկան միայն 100
րուր ստանալու տանեակ տարիների ըն-
թացքում:

Եթէ Մակարը ազգային շահերը չը ծա-
խէր իր սեփական շահերի համար, երեւի
մի յայտնի գումար ընդունելով Շարքուրդից,
որպէս զի գործի ի մէջ եկեղեցական շա-
հերի, այս քաղաքի քամոյեանց եկեղեցին
տարեկան չորս հազար րուր եկամուտ կու-
նենար և կարող էր մի ծխական գլուխ
պահել իր գաւթում:

Ոչինչ բան չը կայ որ ժամանակով չը
յայտնվի: Ժամանակով կը յայտնվի թէ
ո՞ւմ հետ էր բաժանում Մակար եպիսկոպո-
սը իր ստացած կաշառքները, որպէս զի
այդ անձինք լուեն նրա արած զեղծութեան
մասին:

Գ. Ա.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ԿԱՐԵԼԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Երկու ամիս կա, մի օր Միացեալ ընկերու-
թեանց երեսփոխանական ժողովին զիմեցինք
առեւով:

Պարոններ, նպատակն որչափ և գովելի լինի,
ձեր ուղղութեան կատարեալ համաձայն չեմք:
Ազգայն իրաւունք ունի մեծ բարեքննի անկախ
այս ընկերութեան: Գուցէ ըստ բաւականի ու-
սումնասիրած չէք երկիր մեր գաւառացուց էա-
կան և անմիջական պէտքերն: Ըստ մեզ սոսկ
մտաւորական կրթութիւնն չէ այս ժամուս Հա-
յաստանի ժողովրդեան անհրաժեշտ պէտքն:
Լաւ կը լինի ուրեմն եթէ բարե փոխ էք ձեր
նպատակն առանց ուսման ծաւալումն մէկ
կողմ ձգելու՝ մտածեք թէ Հայաստանի տնտեսա-
կան բարեօրոշման նպատակն քան զայն առաւել
ստիպողական է:

Նոյն միջոցին մի պարբերական հանդէսի մէջ
գրեցինք.

«Լուսաւորութիւն ասուածն մի առաձգական
բառ է, և մի ազգ սոսկ ընթերցմամբ և գրա-
գիտութեամբ չէ որ կը լուսաւորուի: Ուսմունքն
յառաջ մեր ազգն հայն կարօտութիւն ունի:
Պէտք է ուրեմն որ ամեն գաւառացի հայ իր տե-
ղական պիտոյից յարմար եղանակով կըր
թիւն հաշիւ անել իր տնտեսական կարող-
անքի մասին: Ինչպէս, ասացին ոմանք, միթէ մի ոք կա-
րող է ուրանալ թէ «չոյսն» և «գիտութիւնն»
ամեն բարեաց միակ աղբիւրն է: Միթէ այդ պա-
րունն չը գիտէր որ ամեն եւրոպական ազգեր,
հին և նոր, հիւսիսային թէ հարաւային, ի նոր-
հըս ուսման գտած են իւրեանց բարօրութիւնը:
Միթէ նա չէ կարգադրած այս ինչ հեղինակն որ
կատէ— «Կուրքն անթիւ չը մնայ, ուսմունքն
սովորէ—»: Միթէ չէ լսած այս ինչ անմահ փի-
լիսոփային խօսքն, որով կը հաստատէ թէ ուս-
մունքն և գիտութիւնը միայն կարող են երջանիկ

ղական պիտոյից յարմար եղանակով կըր
թիւն հաշիւ անել իր տնտեսական կարող-
անքի մասին: Ինչպէս, ասացին ոմանք, միթէ մի ոք կա-
րող է ուրանալ թէ «չոյսն» և «գիտութիւնն»
ամեն բարեաց միակ աղբիւրն է: Միթէ այդ պա-
րունն չը գիտէր որ ամեն եւրոպական ազգեր,
հին և նոր, հիւսիսային թէ հարաւային, ի նոր-
հըս ուսման գտած են իւրեանց բարօրութիւնը:
Միթէ նա չէ կարգադրած այս ինչ հեղինակն որ
կատէ— «Կուրքն անթիւ չը մնայ, ուսմունքն
սովորէ—»: Միթէ չէ լսած այս ինչ անմահ փի-
լիսոփային խօսքն, որով կը հաստատէ թէ ուս-
մունքն և գիտութիւնը միայն կարող են երջանիկ

անել զմարդ: Միթէ կարելի է մեզ կէտ առ կէտ
չօրինակել ինչ որ Եւրոպայի մեծ ազգերն կը
գործեն: Ի՞նչպէս հար է նոյն աստիճանին
բարձրանալ եթէ նրանց գտած շաղկին ճշդու-
թեամբ չը հետեւիք: Թող տուէք ուրեմն այդ
ընկերութեան «չոյս» սփռել ազգին մէջ, թող
տուէք մեզ առողջ, առաքին և հմուտ մի սե-
րունդ պատրաստել: Մենք ետանդուն երկուս-
տարդներ ենք որ ձեր երևան գալին շատ յառաջ
անաքեկ դիտած ենք այն վիճն յորում կը
գտնուի մեր հայրենիքն, և մենք պիտի ջանամք,
որքան կարելի, այդ վիճն ազատել զայն սոսկ
մտաւորական կրթութիւն տալով, յորմէ հետեւ
ամեն բան կարելի է ձեռք բերել: Թէ որ դուք
անտեսական ուղղութեան կողմնակից էք, եթէ
լաւ համոզուած էք թէ այս ուղղութեան մէջ
կարող ենք օգտաւէտ կերպով աշխատել, սխալ
գուռ գարկեր էք, ձեր փնտածան ուրիշ
տեղ է»:

Քննենք:
Ի՞նչ կը նշանակեն յեւրոպայ. արհեստ և գի-
տութիւն, կամ ի՞նչ եղել են ի սկզբանէ անտի
սոցա յարակցութիւններն:
Ամեն եւրոպական ժողովուրդ, երբ իբրեւ ազգ
գոյութիւն ունենալ սկսել է, նախ երկրագոր-
ծութեան և արհեստից մէջ կարողացել է ստա-
նալ իւր գոյութիւնն: Այս նախնական վիճակն
պահել է զայն մինչև այն ժամանակ, ուր պէտ-
քերն աճելով և յարաբերութիւններն ընդլայնե-
լով, արեւստապարժութիւնն (թէ քննիք) մտել
է այդ ժողովրդեան մէջ: Ապա արեւստապար-

ժութիւնն աստիճանաբար նորա մէջ զարգանալով
ընդունակ գտնվել է ի վերջէ ըմբռնելու մասնա-
գիտաց խորհուրդներն, և հետզհետէ գիտութիւնը
ևս յառաջանալով, հասել է վերջապէս նոյն չը-
նորհիւ այժմեան կատարելութեան. ուսմունքն,
ընդհանուր առմամբ, աստիճանաբար մուտ գտած
է ուրեմն աշխատասիրի բնակարանին մէջ, և սա
գիւղացիին համար միշտ մի բարոյական պահանջ
է նկատուել, քան թէ յառաջացման անհրա-
ժեշտ մի պայման: Եւրոպայի մշակն և գործա-
ւորն նախ պարզ ընթերցանութեան և ապա ուս-
ման պարագեցուցել են, երբ արդէն արուեստա-
վարական մասին մէջ ըստ բաւականի կրթեալ
գտած են զայն: Նոյն իսկ Ֆրանսան, որ այս-
պիսի հարցերու ժամանակ ուրիշ ազգաց մէջ կը
հաճին իբր օրինակ ցոյց տալ, ուրիշ կերպ չէ
հասել այն կատարելութեան յորում, կը փայլի
այժմ: Երբ բազմաթիւ երեք դարէ ի վեր Ֆրան-
սայի աշխատաւոր մասին նիւթական յառաջդի-
մութիւնն իւր մտաւորական զարգացման հետ,
կը տեսնեմք թէ այս վերջինն նիւթականին սոսկ
օժանդակն լինելով՝ մի և նոյն համեմատութեամբ
չէ զարգացած: Այս ժամուս իսկ Ֆրանսայի 30
միլիոն աշխատաւոր մասն մտաւորական զարգաց-
ման մասին ուրիշ շատ ժողովուրդներէ յիտ մը-
նացել է և սակայն ընդհանուր երկրին բարգա-
ւաճումն հասել է վերին աստիճանին: Պատճառ-
վան զի նա արուեստավարական ճիւղին մէջ
յառաջացել է կատարելապէս: Նոյն կարող ենք
ասել և Անգլիոյ, Պրուսիայի, Զուիցերլանդի, Հոլան-
դայի և Ամերիկայի շատ երկրներու համար: Եւ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱՂՅԻԱՅԻՑ

Յուլիսի 27

Սրանից 6 տարի առաջ մի քանի աղաների չնորհիւս. Թրիկի և Բ. Ստեփաննոս եկեղեցիներէ երեքփոխան ընտրուեցաւ պ. Յովհաննէս Վանցեանը, և նրա հաշուառութեան նշանակեցան պ. պ. Յովհաննէս աղա Յակոբջանեանը, Յովակիմ Գեղամեանը և Սարգիս Յարութեանը: Այսպիսի ընտրութիւնը շատ կատարեալ էր ժողովրդեանը, քանի որ պ. Վանցեանը յայտնի էր իր վարք ու բարքովը, վառնել էր հօր թողած ահագին կարողութիւնը, և հաշուառութեան վրա յոյս չունէր, քանի որ մէկը աղա էր, իսկ միւս երկուսը ազգային գործերում միջամտում էին միայն իրանց անձնական շահերի ծառայութեան համար:

Եւ, յիշելով, ժողովրդի կարծիքը ամենայն ճշգրտութեամբ կատարուեցաւ, որովհետեւ պ. Վանցեանը երբ անց պաշտօնին հասաւ, ըստ հին սովորութեան ընկաւ զեղևութեան և չուայուրեան մէջ: Այս ժամանակը պ. հաշուառութեան Յակոբջանեանը ի պատու աղաների չեղարկութիւն էր պահում, իսկ միւսները, Յայրինքն Գեղամեանը և Յարութեանը հանդիստ խղճով լուծութիւն էին պահում: Արդէն երկու տարին անցել էր, երբ պ. Վանցեանը իր բարեկամներին և ազգակիցներին հաշիւ էր ներկայացուցել և նրանց գովութեան և փառաբանութեանց արժանացել էր. ուստի այդ ուրախութիւնից յետոյ աւելի ջերմութեամբ շարունակեց իր գործունէութիւնը: Չը նայելով որ հոգեւոր իշխանութիւնը քանիցս անգամ հաշիւ էր պահանջում, չը նայելով որ ժողովուրդը թէ լրագիրներէ միջոցով և թէ առանձնապէս բողոքում էր նրա դէմ, բայց նա լսել անգամ չէր ուզում. միայն այսքան էր ասում թէ՛ ամեն բան պատրաստ է և հաշիւս մաքուր: Վերջապէս ժողովրդի համբերութիւնը հասաւ: Ամսոյս 23-ին մի քանի երիտասարդներ հարկւր և մի ստորագրութեամբ մի խնդր ներկայացրին նորին գեր. սրբազան Սաղիսեանին այն բովանդակութեամբ, որ նա անմիջապէս կնքել տայ նրա հաշուական մատենաները, որովհետեւ պ. Վանցեանի վարքուբարքը և չուայուրեանը տալիս էին նրանց կասկածել, որ նա չէր կարող հաւատարմութեամբ և ամբողջապէս ծառայել ազգին, մատնացոյց անելով և այն, որ նա անկարող է երեցփոխան լինել, քանի որ համաձայն օրինաց չունի սեփական անշարժ կալուածք:

Նորին գերապատուութիւնը խելոյն և եթ կանչել տուէր պ. Վանցեանին և յայտնեց նրան իբրեւ իր բովանդակութիւնը: Յիշեալ պարոնը այս բանս լսելով՝ այնպիսի չփոթի մէջ ընկաւ, որ

նրա պատասխանները բաւորով ժամու չափ անհասկանալի եղան: Ի վերջոյ նա ուշքի եկաւ, սկսեց ազգել և պաղատել եպիսկոպոսին ասելով. «Հայր, եթէ կամիս, կարող ես զիս փրկել»: Տեսաւ որ աղաւթութիւն չը կայ, 2 ժամ միջոց խնդրեց մատենաները ներկայացնելու համար, և 4 ժամից վերջը բարեկարգիչ տէր Թադէոս քահանայի հետ ներկայացրեց 1879, 1880 և 1881 թ. մատենաները, որոնք անաղելն յետոյ տեսան որ երեքն էլ անգիր են, ինչպէս որ միջոցը ստացել էր, այնպէս էլ վերադարձրեց: Նա այսպէս էր մտածել, որ սրանից աւելի պարզ հաշիւ չի լինի:

Նորին գեր. հրամայեց կնքել նրա սենեակը, արկղը և ժողովի պահարանը, հրաժարեցնել նրան պաշտօնից մինչև հաշուառութեան օրը և ժամանակաւոր նրա տեղը նշանակել հոգեւոր իշխանութեան կողմից տէր Յիշա Համբարձումեանին, և ժողովրդի կողմից պ. Գեղորդ Պետրեանին: Իսկ արձանագրութիւնը հանդերձ մատենաներով և խնդրով ուղարկել ի կօնսխատորիս ի շուտափոյթ տնօրէնութիւն: Այս հանգիստեց մէջ լուր կայ, իբր թէ մի քանի աղաներ ուղում են օգնել պ. Վանցեանին, բայց իմ կարծիքով նրանց կողմից մեծ սխալմունք էր լինի այդպիսի քայլ անելը, նա մանաւանդ որ վատ հետեւանքներ կարող է ունենալ պ. Վանցեանի համար: Իսկ ինչ կը վերաբերի այդպիսի պարոններին, որ նրանք պ. Վանցեանին յանկարծակի բերողներն են: Կնքում են զանազան անվայել անկանխելով, դրանք հատուցումը ժամանակին կը ստանան:

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆ

Յուլիսի 2-ին

Անստեղծ տարածութիւն է ստացել հակահրէական շարժումը. թափառական հրէաները հազարներով թողնում են Ռուսաստանը, որի համար շատ ուրախ է «Новое Время» լրագիրը, յայտնելով այն միտքը, թէ շատ լաւ կը լինի որ ըստ իւր է գաղթեն, որովհետեւ նրանք եկաւորն են և քանի որ ուստի արդիւն աւանդում, յայտնաբերում տարածվում էին կեղծ մանիֆեստներ և չլրացեալ քննարկներ, որոնք հրաւիրում էին ծեծել հրէաներին: Չեղ յայտնի է արդէն որ հակահրէական շարժման իսկական պատճառները քննելու համար ուղարկուեցաւ հարաւային Ռուսաստանը կամ Կուստայով:

Ռուս գիւղական ժողովուրդը միացնում է իր դադափարի մէջ, որպէս ազգի թշնամիներին՝ հրէան տարրը և երկրաստորդ ուսանողութիւնը: Պատահում է որ թէ դաւաճեալներում և թէ մայրա-

բաղաւորում ուսումնականները մօտենում են և հարցնում են ուսանողներին. «ТЫ СТУДЕНТЪ ИЛИ ХРИСТИАНИНЪ?» (դու ուսանող ես թէ քրիստոնեայ): Ի հարկէ ուսանողը պատասխանում է թէ քրիստոնեայ է:

Չէրնոգորիայի արտակարգ դեսպանի Ս. Պետրեւիչովից եղած ժամանակ ես նրան տեսայ Կենդանաբանական այգիում: Բաժանիկը Պետրովիչի հետ կար մի ուսում օֆիցեր և հետևում էին նրան վեց չէրնոգորցիներ իրանց ազգային զգեստներով հագնված: Ահապարակ նրանք շատ դիպեցեալ տեսիլ և առողջակալմ մարդիկ են: Մեծ ուշադրութեամբ նրանք նայում էին կենդանիներին վրայ:

Պատմեմ մի անցք, որ պատահել է նորերում մեր Ս. Պետրեւիչովի հայոց եկեղեցում: Մեր հարուստները կարծում են, որ միլիոններ ունենալով, նրանք ամեն բանի մէջ իրաւունք ունեն խառնել և ուրիշներին հրամայել: Մէկ կիրակի օր, պատարագի ժամանակ, մի հայ ուսանող կանգնած է լինում եկեղեցում առանց չուրեքելու, երբ ամենքը չորեք են: Պ. Սանասարեանը խելոյն մարդ է ուղարկում պարոնի մօտ և ասել է տալիս նրան որ կամ չորեք, ուրիշների պէս, կամ եթէ չէ կարող չորեք, թող եկեղեցու հետի դրան մօտ կանգնի, որպէս զի ժողովուրդը չը տեսնի որ նա չէ չորեք և նրանից օրինակ չառնի:

Ես ճշմարիտ չը գիտեմ, ինչ իրաւունքով պ. Սանասարեանը խառնելում է այնպիսի գործում որ իրան չէ վերաբերում: Եւ միթէ մեր եկեղեցին ամեն մարդու ազատութիւն չէ տալիս աղօթել այնպէս ինչպէս ինքն է կամենում: Կարծեմ մեր եկեղեցին այդ կողմից ազատ է: Կան մարդիկ, որոնք կարծում են որ իրանց ձեռք բերած հարստութիւնը նրանց իրաւունք է տալիս մինչև անգամ ուրիշների խղճի գործերի մէջ խառնվելու: Միթէ աղօթելու նշանակում է անպատճառ ծնկները բարին դիպցնել:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

Թիֆլիս, 29 յուլիսի

Չեղ պատուական լրագրի 135 համարում կարդայի մի յօդուած մի քանի անձանց ստորագրութեամբ, որի մէջ գրած էր իբրեւ թէ ես ձեր թատրոնում փորձի ժամանակ, մի քանի պարսկական ներկայութեամբ ասել եմ պարսկական կարապետ Մատինեանին, թէ նա և պարոն Տէր-Կաթինեան են ինձ ասել. «Եթէ մեր գերատնայնից մէկը համարձակվի մասնակցել օրիորդ Աստղիկի ներկայացմանը, նա էլ խորում չի լինի»: Այդ խօսքերը ընդունվին սխալ են, ես այդ բանը առաջին անգամ լսել եմ օրիորդ Աստղիկից՝ երբ առաջարկում էր մասնակցել իր խաղին: Ահա

նրա խօսքերը. «Վարդուհի, իմ խաղին կը մասնակցես»: Ես պատասխանում եմ՝ «Ինչու չէ»: Բայց նա աւելացնում է թէ՛ «Եթէ քեզ էլ արգելեն, չը թող տան մասնակցելու ինչպէս ուրիշներին»: Ես ընկնում եմ մտառանջութեան մէջ, թէ այս ինչ բան է, գուցէ մի բան կայ, ասում եմ նորան, կիմանամ, եթէ ընկերներս կը մասնակցեն, ես էլ կը մասնակցեմ: Յետոյ այդ մասին հարցնում եմ պարոն Տէր-Կաթինեանին թատրոնում (և ոչ թէ Ալեքսանդրեան այգիում) որից քիչ հեռու կանգնած էր Մատինեանը: Տէր-Կաթինեանը ինձ պատասխանում է. «Օրիորդ Աստղիկը ինձ էլ այդպէս ասաց, բայց հաստատ չը գիտեմ, թէ որքան ուղիղ է այդ լուրը»: Երբ պարոն Հովսեփեանը այդ մասին ձեր թատրոնում ինձ հարցրեց, և նրա մօտ նստած էր պարտեւում միայն պարոն Մատինեանը, ես ասացի մի և նոյն բանը. բայց չը գիտեմ թէ պարոն Հովսեփեանը ինչից ստիպված և ինչու համար իմ ասած խօսքերը փոփոխեց... Խմբակային տէր-բարեհաճեցէք խնդրում եմ ի սեյ ճշմարտութեան մի անկիւն չնորհել ձեր պատուական լրագրում իմ այս նամակին:

Օրիորդ Վարդուհի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարից սկսում ենք արտատպել բանասիրական բաժնում պ. դոկտոր Փէշտաթաճեանի յօդուածը, որ տպված էր «Մասիս» լրագրի մէջ և որ իր ուղղութեամբ համապատասխան է մեր լրագրում յայտնված մտքերին Հայաստանի տնտեսական հարցի վրայ:

Գուրս եկաւ «Արարատ» ամսագրի յուլիս ամսի տետրակը, նոյնպէս դուրս եկաւ «Փարոս Հայաստանի» հանդիսի յուլիս-օգոստոս ամիսների տետրակը:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Էմինի նոր գիտական աշխատանքը Մովսէս Խորենացու մասին հետեւեալ վերնագրով «Мосей Хоренский и Древний эпосъ армянскій»: Գիրքը տպված է Մովսէսի մահի 1881 թվին: Կարգաւոր յետոյ այդ գիրքը, կաշխատեմք մեր կարողութեան չափ ծանօթացնել նրա հետ մեր բաժանորդներին:

Լսում ենք որ Գրիգոր եպիսկոպոս Աղափրեանց չը կարողանալով համոզել ոչ ոքին իշխմանի ձեռնարանի ուսուցչութեան պաշտօնն ընդունելու, վերադառնում է Թիֆլիս առանց իր հետ որ և ուսուցիչ ընդունու:

Թիֆլիսցիներին յայտնի է որ մեր քաղաքային դումայի ձայնաւոր պ. Պետրոսյանը նախա-

անուղիղ է կարծել թէ Եւրոպայի իւրաքանչիւր մշակ, գործաւոր անհատապէս կարող պիտի լինի մի օր զարգանալ մատարապէս այնչափ որ կարենայ իւր ճիւղին ամեն կատարելագործութիւններն ձեռք բերել լոկ իւր սեպական նախաձեռնութեամբ:

Վերջապէս և տեսական գիտութիւնը հարկ են այդ անհատներու շահերուն, բայց միշտ ինքզինքնին մասնագիտութեանց նուիրած անձերէ կը սպասեն նոցա կիրառութիւնը: Կազմակերպելով մի գործաւորութիւն մէջ մի մասնագետ կը բաւէ ամբողջ մի գործաւորներու խումբ կառավարելու համար: Երբ մի հոյզ բերքն մասնաւոր պարագայներով կը նուազի և զգործաւորն անանկացնել կը սպառնայ, երբ մի գործուած կերպաս իւր արժողութիւնը կը սկսի կորուստնել լաւագոյն հիստուած մի կերպասի մօտ, եւրոպացի մասնագետն է որ ցոյց կը տայ բերքն իւր նախկին առատութեամբ կը բարձրելու կերպը, և կերպասն աղնուաղն է քիչ ծախքով ստանալու համար նոր մի հարք կուտեցանէ գործաւորին, նորահար մի գործիք կը նուիրէ իրեն:

Ֆրանսայի վերայ երբ զմայլմամբ և արդարանալի նախանձով կը խօսիմք, պէտք չէ ուրեմն մոռնալ որ նա ի շնորհս իւր 30 միլիոն աշխատաւորաց է որ կարողացել է այժմեան վիճակին արժանանալ: Այդ աշխատաւորներն որք մի միայն պարտաստուած են ի գործ դնելու ինչ որ կը գայ ցոյց տալ իրեն մասնագետն շնորհիւ իւր բազմամայ աշխատութեան, մատուրական զարգացման մասին տակաւին խիստ ետ մնացած են

Գերմանիայի և նոյն իսկ Յունաստանի բանւոր ժողովուրդին:

Ուսման ծառայումն ընդհանրացնելու հարցն տակաւին Ֆրանսայի մէջ մի նոր հարց է: Մէկ ամիս հազիւ կայ որ Ֆրանսայի մէջ մեծ հեղինակութիւն ունեցող մի անձ, խելամուտ մասին կարծեաց արձագանքն եղաւ երբ հրատարակեց թէ ժողովրդեան բարօրութիւնն ապահովելու համար արուեստավարժութիւնն առաջին տեղը պէտք է ընէ նրա կրթութեան մէջ: Այս ուղղութիւնը լաւ բմբունքն նաեւ Ռուսիոյ կոտակարութիւնը, որ ժողովրդեան վիճակն լաւ ճանաչելով և իւր երկազարեան վերացական և գաւազան (քլասիք) կրթութեան աղետները միտնելով, նրանոր միջոցներ ձեռք առաւ այս տարի, որպէս զի նախ ժողովրդեան արհեստական և հողագործական կրթութեան հոգ տար ընդունելու: Այսպէս ասեմ, լոկ նախակրթական դպրոցներուն առ ալժամ առանց չափել դուրս կարելու թիւն տալու, սոքա արուեստավարժութեան օժանդակն միայն որոշեց անել: Շատ ատեն պէտք չէ տեսնելու համար թէ այն ուղղութեամբ որքան պիտի բարեօքի ուսման ժողովրդեան կազմութիւնը:

Եւրոպայի մէջ այս կերպ ահա ձեռք բերում է միշտ ընդհանուր բարձրացումն: Այս ժողովրդեան որ պահ մի չեղել են այս բնական ուղղութիւնն, ստիպուել են դառնալ անդ վերստին: Մի բանակ ունենալու համար եւրոպացին նախ նորա մի գոյութիւն տալու փոյթն կը տան, և երբ գոհացուցիլ կերպով գայն կազմա-

կերպեալ կը տեսնէ, այն ատեն միայն ամեն մէկ գինւորի մատարական զարգացման կը բաղի, որով ամենայն կատարելութեամբ օժտուալ մի բանակ կը լինի այն:

Բայց արդի մեր հայ աւանակներն կը պահանջեն Հայաստանի վերանորոգութիւնն ստանալ ժամանակակից տնտեսական գիտութեան պատուէրներուն հետեւելով:

Տնտեսական գիտութիւնն որ միազարեան մի գիտութիւն է Եւրոպայի մէջ, մասամբ փորձառութեան վրայ հիմնուած է, բայց գլխաւորապէս տեղական հայ գաւառի քննարկէն ծրարումը առած է: Նորա քաղաքացիական թիւններէն շատերն առկաւին անորոշ և վիճաբանելի են, վրասն զի ամեն երկրի մէջ հարուստութիւն գոյացնելու միջոցներն այլօրէն կը մեկնուին: Այսպէս ասեմ, ամեն երկրի, ամեն ժողովրդեան, ամեն ժամանակի մէջ չեն կարող միակերպ լինիլ և նոյնանման հանգամանակ մէջ իսկ չեն կարող ի գործ դրուիլ: Հետեւաբար, երբ մեր ազգին ընդհանուր յառաջադիմութեան առթիւ, Եւրոպայի տնտեսագիտաց կարծիքներն յառաջ կը բերեն, իբրեւ իւրեանց կարծեանց նպատակաւոր, կուրօքն մի ընդօրինակութիւն արած կը լինին: Այս անխորհուրդ նմանողութեան պատճառաւ է ահա որ շատ անգամ այլ և այլ գործառնութեանց համար գործող մարմիններն ընդունայն կը սպասեն իւրեանց ոյժերն:

Տակաւին Հայաստան չունենալով այն կազմակերպութիւնը և այն նախկան զարգացումն

որով կը փառաւորուին եւրոպական երկիրներն, այժմեան յառաջացած Եւրոպայի տնտեսագիտաց ամեն քաղաքան չեն կարող այս ժամուս և այս նահապետական պայմաններու մէջ գործադրել լինել հայ գիւղացիին մօտ: Տարբ դար յառաջ, երբ Եւրոպայի ժողովուրդը մեր գաւառացի աղագայնց ազգի նիւթական վիճակն ունէին տակաւին, Տնտեսագիտութիւնն առուածն գիտական ֆօթիւլը բերեց ստացած չէր գեղ: Տեղային ըստիպողական պէտքերն, ցամաքային պարփակումն (պլսթիս) և ընդհանուր Եւրոպայի յեղափոխութեան յառաջ եկած նոր կացութիւնը, ստիպեցին, չորս մի դար յառաջ, որ մարդիկ մասնաւորապէս ուսումնասիրեն թէ ոչ են արտագրութեանց, սպարմանց, փոխանակութեանց և այլն լաւագոյն եղանակներն: Այսպէս ասեմ, երբ տնտեսագետը կարծիք կը յայտնեն Եւրոպայի արուեստից, մշակութեան և ուսման յարաբերութեանց վերաբերմամբ, պէտք չէ որ այս ժամուս իսկ մեր ազգին համար կատարելապէս յարմարելի կարծեն նախ, որք յանուն այդ հեղինակաց պատգամներ կորուսան:

Այժմ տեսնեմք թէ ոչ են զայն պահանջող հանգամանքներն, ինչ պարագայներու մէջ կը գտնվի նա այսօր, և որոշեմք թէ կէտ առ կէտ ժամանակակից բարգաւաճեալ եւրոպական դրութեան հետեւելով կարելի է չուտով մեր նպատակն մօտենալ:

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԳ ՏԱՐՈՒԱՅ
դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է
Կովկասեան ու Կենտրոնական զրափաճա-
նանոցներում:

Գինն է 40 կոպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէ-
կով ձեռք բերել, գինը ԿԱՆԻԿ ՎՃա-
րելով և ճանապարհահատում իր վրա
առնելով:

Թող զիմէ մեզ հետեւալ հասցեով.
«Въ Тифлисъ. — На Авлабарѣ. И-
вану Петровичу Назарьянцъ.»

144 Արժուէնու գաղթէա 144
ամենաէական պահեստ
մեքէի և հայեկների:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ ВЪ НАЙМЫ

Въ галлерей имѣются: вода, газовое
освѣщеніе и телеграфная станція.

4—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՐՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ

Կալլէրէում կայ ջուր, գազի լուսաւորու-
թիւն և հեռագրական կայարան:

4—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ՔԱՆԹԵ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբա-
ներ, կոնֆետներ, ԿԱԿԱՕ, բրինձ, Ա-
ՄԱՆԵԼԵՆ, բոխներ, թաներ, երես լուս-
նայու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (սյճի), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գգալներ,
ԳՐԻՉՆԵՐ, Թուղթ, մատիաներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, ալբոմ
ներ, ՄԱՀԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, աբիկո, պա-
րուսին, Թաշկինալներ, երեսքիշներ, կեօն-
կա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՑՆ, խե-
րես, կոնեակ և այլն: ԹէՑ մեծ քանակու-
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴՐ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գտնով. ՇԵՐԲԵՏ մա-
գնեղիա, խմոր ծԱՐԱԻԻ գէմ, ԽԵՆԱՅԻ գի-
նի ջերմի գէմ, կարթոնան ՓՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ փաթեկիւղե-
տի համար, պարսկական փոշի:

39—100

Ս Ո Ւ Ա Կ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ ա-
ռաջին հատորը երկրորդ ապագրութեամբ,
ՓՈՓՈՒԱԾ, որի մէջ գտնվում են բա-
ցի այն բոլոր երգերից, որոնք յայտնի են
ժողովրդին, նոյնպէս նոր ԵՐԳԵՐ, հատըն-
տիր **ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆՆԵՐ**
և ԱՐՁԱԿ զրուածներ:

Վաճառվում է. ԹԻՖԼԻՍ՝ Կենտրոնական
և Կովկասեան զրափաճաւանոցներում, Ե-
րեւան՝ պ. Արգար Գուլամբրեանցի խանու-
թում, ԲԱԳՈՒ՝ պ. պ. Գրիգոր Գրիգորեան-
ցի և Ս. Տէր-Օհանեանցի խանութներում:
Օտարաքաղաքացիները կարող են գտնալ
ԲԱԳՈՒ նոյնպէս «ՍՈՒԱԿԻ» խմբագիր-
հրատարակչին այս հասցեով. Авакы Та-
заревичу Григоріанцу, въ Баку.

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլ:
Աւագ Գրիգորեանց: 2—5

ՀԷՆՑ ԽԱԿՈՅՆ ՍՏԱՅՎԵԼ են
մեծ քանակութեամբ հրացաններ, ԲԷ-
ՎՈԼՎԵՐՆԵՐ, փամբուշներ, ԹԷՑ
առաջին տեսակի, բոխներ և այլն: **204**
ԲՈՐ (choke bore) **ՀՐԱՑԱՆՆԵՐ**
George Dau-ի գործարանից 120 ր., ԲԷ-
վոլբերներ բուլբուլ 11 ռուբլուց, 700 ՄԱՀ-
ՃԱԿԱԼՆԵՐ 5—40 ռուբլ: Ծախվում
է նոյնպէս պարուսին կիսագնով և այլքով
ներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ**
ՄԷՉ: 4—12

Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գանօփակայա փա-
ղոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՕՅԻՑԻ փողոցը № 11. Բիօստատան
եռեկի քուշան: Ընդունվում են ամեն լի-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
տպագրութեան համար փայտի և պղնձի
վրա:

«Ի Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ ԲԱՅՅԻԻ

Տպագծ մաքուր թղթի վրա, զիւրքը բաղ-
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է
«Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական
զրափաճաւանոցում», «Կովկասեան զրա-
փաճաւանոցում» պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար-
ջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագազին-
ներում:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ:

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մագերը ամրացնող և նրանց
ԲԵՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերագործ-
ւորող Գինը 2 ր. շինը, **ՓՈՍՏԱ-**
ՅՈՎ ուղարկած 2 ր. 49 կոպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը **ԽԵՆԱՅԻ**
ԻԿԼ, մագերը ամրացնելու հա-
մար, 1 ր. ամանը վրձին զլխա-
ցաւի գէմ, **ՏՈՒՍԼԷՏԻ ՍԱ-**
ՊՕՆ և հոտուէա ջրեր և այլն:
4—100

ՎԻՆԵՆԱՅԻ ՄԵՔԷԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջե փողոցում Կատարիկաց փողոցի տնկիւնում ՄԻ-
ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են գիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу
Н. Теръ-Никогосову.

46—150

Արգէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին **ԲԱՅՅԻԻ «ԽԵՆԹԸ»** անու-
նով փրկատուութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք զիմել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահատի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ
պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՉ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АП-
РЪСЯНЦУ.

ՄԻ ԿՏՈՐ ՀՈՂ մագրված **ԿԱ-**
ՄՈՒՐՋԻ Էժան ծախվում է 18 ր., 20
ր. և 24 ր. քառասուն տաէկեր: Հարց-
նել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ**
ՄԷՉ: Նոյն տեղը ծախվում է 1300
քառ. տաէկն այդի Միխայլովսկայա փողո-
ցի վրա, 17 ր. իւրաքանչիւր տաէկեր:
4—6

ВЪ РЕДАКЦИИ ГАЗЕТЫ „МШАКЪ“
продаются слѣдующія нѣмецкія брошюры:
Die Oekonomische Lage der Armenier
in der Turkei. von Dr. GRIGOR ARZRU-
NI. Uebersetzt von A. Amirchanjanz. Preis
25 kop.
Die Hungersnoth in Türkisch-Armenien
von Dr. GRIGOR ARZRUNI. Uebersetzt von
A. Amirchanjanz. Preis 20 kop.

ՔՐԷՀՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԲԸ-
ՆԱԿԱՐԱՆՆԵՐ երկուսը հինգ տե-
նակից բաղկացած իւրաքանչիւրը, մէկը
չորս և երեք տենակից բաղկացած յարմա-
րութիւններով, Վազնեսեանսկայա փողոցի վր-
ա տուն № 11: Գինը խմանով **ՎԱՍԻ-**
ԼԻ ԿԱԼԱՄԿԱՐՈՎԻ խանութում:
2—3

Ի Ա. ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԻԱՐՈՎԻ
ՄԱՍՆԱԻՐ ԲԵՆԱԿԱՆ ԴԸՊ-
ՐՈՑԸ (Թիֆլիս, Բարձրակայա փողոց, տուն
№ 10, որտեղ առաջ գտնվում էր Ինտեն-
զանսով: Լրացուցիչ և սկզբնական քննու-
թիւնները կը սկսվեն ՕԳՈՍՏՈՍԻ 20-ին, իսկ
ուսումը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ին:
2—3

ՍՐՈԾԱԿՆԵՐ կոտորելու փոշի:
Ծախվում է **ԾԱՏՈՒՐՈՎԻ** լամ-
պի մագազինում:

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմեոնե-
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Նրէբերի
„Տնային բժշկական մարմնամարզութեան“
գրքից հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց զործիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է «Կենտրոնական և Կովկասեան զրա-
փաճաւանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ.» Тройцкій пер. типо-
графія Вартанянца, въ Тифлисъ.

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱԶՈՂՆԵՐԸ պէտք է գտնել **ԱՆ-**
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ
լու տեսակի ֆունը 1 ր. 20 կ. և 2 ր.
և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ
և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖ-**
ԼԻՍՈՒՄ, որպէս զի խմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆ-**
ՑՈՒԹԻՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ
առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ:**

24—100



ՎԱՐՇԱՎԱ: Իր յատկութիւններով մարմնի մասերի և
մանաւանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փոռում
ոչնչացնող յայտնի նիւթը,
ԳԱԼՄԱՆԻՆ
անունով ծախվում է Եւրօպայի բոլոր մեծ քաղաքների զեղատների և զբոյստների
մօտ: Գլխաւոր գէպօ նիւթի հնարող Փարմացիի մագիստրոս **Վ. ԿԱՐՊԵՆՍ-**
ԿՈՒ զեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտրալի փողոց № 35.
Գալմանիին մեծ արդիւրը արժէ **Վարշավայում** 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.
պէտք է զգուշանալ խարդախութեանից և պահանջել, որ իւրաքանչիւր արդիւրը
ունենայ զործածութեան մեկնութիւնը և փարիզի աշխարհահռչակ մեղախները.
Վ. ԿԱՐՊԵՆՍԿԻ
13—20 (1)

